ՌԴ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԻՆ

15.09.2021 18:12

ՌԴ փաստաբանների պալատի նախագահ Յուրի Պիլիպենկոն շնորհավորական ուղերձ է հղել ՀՀ փաստաբանների պալատի նորընտիր նախագահ Սիմոն Բաբայանին:

Ուղերձում մասնավորապես նշվում է.

«Հարգելի Սիմոն Ալբերտի,

Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ ՀՀ փաստաբանների պալատի նախագահ ընտրվելու կապակցությամբ: Համոզված եմ, որ Ձեր ղեկավարության ներքո Հայաստանի Հանրապետության միասնական և անկախ փաստաբանությունը կպահպանի և կամրապնդի իր բարձր հեղինակությունը պետության և հասարակության ներսում:

Մեր պետությունների փաստաբանական համայնքների միջև ձևավորվել են ջերմ ընկերական հարաբերություններ, Դուք ակտիվորեն մասնակցում եք Ռուսաստանի Դաշնության փաստաբանների պալատի կողմից կազմակերպված միջազգային միջոցառումներին, այդ թվում Սանկտ Պետերբուրգի միջազգային իրավաբանական ֆորումների նստաշրջանին:

Ուրախ կլինեմ անձամբ Ձեզ հետ հանդիպել»:

Բեռնել ՌԴ փաստաբանների պալատի նախագահի գրությունը

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })